Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ « ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ « Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում»

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Լուսինե Ղարիբյան

Բովանդակություն

1. Ներածություն_____2
2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում_____5
3. Պատմության կրթական ներուժը_____11
4. Եզրակացություն_____18
5. Օգտագործված գրականության ցանկ_____21

Ներածություն

Կրթությունն անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությանը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելու:

Հայաստանի Հանրապետությունում կրթությունը երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք է:

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

«Պատմության» ուսումնական բաղավառն ընդգրկում է մարդկության պատմությունը, ներկան և զարգացման հեռանկարները, մարդու՝ որպես անձի և քաղաքացու, նկարագիրը և սոցիալական փորձը, հասարակության կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ոլորտները:

Ուսումնական բնագավառի հիմնական նպատակն է սովորողին ամբողջական գիտելիքներ տալ մարդու և հասարակության մասին, ձևավորել ու զարգացնել նրա ճանաչողական, սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, բացահայտել նրա անձնային որակները և ապահովել սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ մասնակցությունը, ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի, սեփական ժողովրդի պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ: Այն օգնում է սովորողին ճանաչել ինքն իրեն, ժամանակակից աշխարհը, կողմնորոշվել հասարակական բազմաբնույթ հարաբերություններում,

ամբողջական պատկերացում ունենալ Հայաստանի քաղաքական , տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր են այն հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր կունենան կրթության բովանդակության մեջ պատմության դերն ու գործառույթները որոշելու և կրթության կազմակերպմանն անհրաժեշտ նյութերը մշակելու համար: Այդ առումով ելակետային նշանակություն ունի պատմության կրթական ներուժի բացահայտումը՝ Կրթակարգում ամփոփված գաղափարների տեսանկյունից, ինչպես նաև դրանց հիման վրա պատմության կրթական հիմնախնդիրների հստակեցումն ու լուծման եղանակների ուրվագծումը:

Ժամանակակից աշխարհում ամենուրեք կարևորվում է կրթական գործընթացի հումանիզացման պահանջը, քանի որ նեղ մասնագիտական կրթության գերիշխանության պայմաններում առաջանում են մասնագիտական հմտություններ, որոնց ներկայացուցիչները միմյանց հետ հաղորդակցվելու ընդհանուր հումանիտար հիմքից զուրկ լինելու պատճառով որպես կանոն, բախվում եմ: Կրթության մեջ տեխնիկական միջոցների ներդրման հարաճուն միտումներին դրականապես հակազդելու և ժամանակակից աշխարհում ի հայտ եկած մի շարք համընդհանուր հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից ավելի ու ավելի է կարևորվում պատմություն ուսանելու անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին.

Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի

ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուսումնասիրությունը արդիական նշանակություն ունի, քանի որ պատմության դասընթացի ընթացքում գրականության միջոցով միջառարկայական կապերի ստեղծմանը, ինչը ոչ միայն համապատասխան գիտելիքներ է տալիս, հայոց պատմություն առարկայից, այլև աշակերտների մեջ արմատավորում է ազգային մտածողություն, միջառարկայական կապերի կիրառմամբ՝ պատմական կարևոր իրողությունների իմացություն, ազգային արժեքների գնահատում և այլն, ինչը կարևոր է աշխարհաքաղաքական բարդ օրեր բովանդակող ժամանակներում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մեր ուսումնասիրության նպատակն է խթանել գեղարվեստական գրականության օգտագործումը հայոց պատմության դասընթացում: Զարգացնել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ :

Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում , որոնք էլ ապահովում են աշխատանքի լիարժեք կատարումը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՈՒսումնասիրության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

ա.բացահայտել հայոց պատմության դասընթացի առանձնահատկությունները,

բ.սահմանել միջառարկայական կապերի դերը ուսումնական գործընթացում,

գ.դասի օրինակով բացահայտել գեղարվեստական գրականության կիրառման առանձնահատկությունները հայոց պատմության գործընթացում:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթական համակարգը ներկայումս գտնվում է անընդհատ փոփոխությունների փուլում, պատմության դասավանդման ռազմավարական խնդիրների շարքում պետք է դիտարկվեն հետևյալները.

1. Արդի աշխարհում բազմակարծության ընդունմամբ հանդերձ՝ մրցակցող գաղափարախոսություններից հայոց մտածելակերպի համար առավել ընդունելի աշխարհայացքային կողմնորոշիչների մշակում: Այդ կողմնորոշիչների հիման վրա հայոց արժեհամակարգի սովորողների համար հասկանալի ձևակերպում, միաժամանակ հաշվի առնելով համամարդկային լավագույն արժեքներն ու մարդասիրական աշխարհայացքը: Կարևոր է , որպեսզի դպրոցական հումանիտար կրթության բովանդակությունը ուղղված լինի հայրենասիրության, քաղաքացիության դաստիարակմանը, հայոց ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու հայոց և համաշխարհային մշակութային արժեքների գնահատմանն ու պահպանմանը:

2. Դպրոցում պատմության դասավանդման նոր կառուցվածքի ստեղծում, որը հնարավորություն կտա ապահովել ուսուցման ազգային հիմքը՝ սովորողի մեջ ձևավորելով մարդու և հասարակության մասին գիտելիքների ամբողջական համակարգը: Ընդ որում, այդ գիտելիքների համակարգը կրթության յուրաքանչյուր փուլում կունենա իր յուրահատուկությունները՝ ելնելով սովորողի շահերից:

3. Տեսական դրույթների զուգադրում սովորողների գործնական աշխատանքների և, ընդհանրապես, առօրյա կյանքի հետ: Այդ առումով կարևոր է , որպեսզի պատմության ուսուցումը դառնա ուսուցում բնության մեջ, գործարար կազմակերպություններում, թանգարաններում, այլուր: Դպրոցն ինքը պետք է դառնա ժողովրդավարության մոդել, որպեսզի պատմական գիտելիքի և առկա իրական մարդկային հարաբերությունների միջև անջրպետ չառաջանա:

Պատմության ուսուցման ժամանակ պետք է արծարծվի նաև հասարակական հարաբերությունների իդեալի խնդիրը և աշակերտը պետք է ընկալի իդեալների իրականանալի լինելը և հետամուտ լինի դրանց իրագործմանը: Քանի որ այսօր Հայաստանում դեռևս ձևավորված չէ քաղաքացիական հասարակությունը, ցածր են մարդկանց իրավական գիտակցությունն ու քաղաքական մշակույթը, սովորողները պետք է պատմության ուսումնառության ընթացքում գիտակցեն իրենց դերը ապագա քաղաքացիական հասարակության ձևավորման գործում: Պատմության ուսուցումը պետք է արժևորի անհատների ու խմբերի ներդրումը ժողովրդավարության հաստատման գործընթացում:

4. Հոգևոր առումով նկատելի որոշակի անկայունության և անորոշության պայմաններում պատմական կրթությունը պետք է հնարավորություն տա նոր սերնդի մարդուն ի վիճակի լինել ընտրություն կատարելու իրեն առաջարկվող աշխարհայացքների, կենսակերպերի հորձանուտում, պետք է սովորողի մեջ զարգացնի խաղաղության մշակույթ՝ պահպանելով, սակայն, ազգային արժեքների համար պայքարելու ոգին ու պատրաստակամությունը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը , որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության , սեփական ժողովրդի պատմության , նրա ստեղծած մշակութային արժեքների , գիտական նվաճումների համար հպարտության զգացում : Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների :

Վերջին տարիներին աճել է անձի արժեհամակարգի նկատմամբ գիտական հետաքրքրությունը տարբեր բնագավառներում, ինչը պայմանավորված է տարաբնույթ տեղական ու համաշխարհային գործընթացներով: Խոսքը վերաբերում է հասարակության կենսագործունեության ոլորտներում համընդհանրացմամբ պայմանավորված զարգացումներին, որոնք հանգեցնում են ազգային սոցիալական և մշակութային համակարգերի ձևախախտմանը, ներքին հասարակական խնդիրներին, ինչպես նաև տարբեր տեղեկութային ներգործություններին, որոնք հանգեցնում են միևնույն հասարակության ներսում

անհամաչափ և տարամետ զարգացումների: Ներկայում անձի արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կարևորվում է հոգեբանական պատերազմի ներգործության բացասական հետևանքները կանխատեսելու և կանխելու տեսանկյունից:

Անձնային առանձնահատկությունների և արժեհամակարգի փոխպայմանավորվածության վերլուծության արդյունքում բացահայտվել են համահարաբերակցային կապեր կյանքի նպատակների, կյանքի հուզական հագեցվածության, կյանքի արդյունավետության, ազատության, պատասխանատվության, անհատականության, էքզիստենցիալության ցուցանիշների միջև: Այս կապերի առկայությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ անձի արժեհամակարգի ձևախախտման հնարավորությունը նվազում է , եթե հստակ են կյանքի նպատակները և կյանքի իմաստավորվածության գիտակցումը:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» [3, 64]: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի- – 398 – ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող

հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը

ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և – 399 – ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը

պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

<<Պատմություն>> առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:

Պատմության կրթական ներուժը

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն ու առաջնորդությունը, հասարակության իդեալներին հասու լինելու և դրանց համար պայքարելու կարողությունն ու ցանկությունը և այլն: Ժողովրդավարական հասարակության քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուները, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ ու հասնել դրանց, պետք է ի վիճակի լինեն արժևորել իրենց տեղն ու դերը հասարակության մեջ և կատարել այն գործառույթները, որ հասարակությունն իր հերթին կակնկալի նրանցից:

Ժողովրդավարական հասարակության քաղաքացիներ կրթելու այս և մի շարք այլ նպատակների հասնելու տեսանկյունից անգերազանցելի է պատմության կրթական նշանակությունը:

Պատմությունը , իր մեջ ներառելով գիտելիքների մի շարք կարևորագույն բնագավառներ, օժտված է վիթխարի կրթական ներուժով, քանի որ այն հիմնական առարկան է, որ ձևավորում է մարդու աշխարհայացքը, մտածելակերպը (մենթալիտետ), արժեքային համակարգը, ինչպես նաև վերաբերմունքն իր և այլոց հանդեպ: Պատմության ուսուցումը ապագա քաղաքացուն հնարավորություն կտա իր առջև ծառացած խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, տեղեկատվական հեղեղի ճնշման ազդեցությամբ , այլ՝ օգտագործելով այն բոլոր հմտությունները, գիտելիքները և արժեքային մետեցումները, որ նրա սեփականությունն են դառնալու դպրոցական նստարանից:

Հանրակրթության պետական կրթակարգում արտացոլված հիմնարար սկզբունքների և կրթական խնդիրների տեսանկյունից պատմության նկատմամբ ցուցաբերելիք մոտեցումների համար առավել կարևոր են հետևյալ գործոնները:

1. Պատմությունը, հանձին իր կարևորագույն բաղադրիչի՝ փիլիսոփայության , ունի հազարամյակների պատմություն: Մյուս բաղադրիչները(բարոյագիտություն , գեղագիտություն , իրավագիտություն , տնտեսագիտություն , քաղաքագիտություն և այլն) աստիճանաբար առանձնացել են փիլիսոփայությունից ՝ ավելի ու ավելի կարևորելով ժամանակակից հասարակության պայմաններում: Տարբեր դարաշրջաններում հզորության են հասել այն քաղաքակրթությունները կամ ժողովուրդները , ովքեր կարողացել են ստեղծել կեսահաստատ փիլիսոփայական համակարգեր : Իսկ ժամանակակից աշխարհի ճգնաժամը հաճախ բացատրվում է այսօրվա իրողություններն ու պահանջները արտացոլող համակողմանի պատմական համակարգերի բացակայությամբ : Փիլիսոփայական մոտեցման շնորհիվ Հին Հունաստանում ստեղծված կրթական համակարգը ՝ Պայդեյան այսօրվա կրթության ժողովրդավարական կրթության ջատագովները համարում են չափանիշ , քանի որ Պայդեյայի կրթական համակարգում դրվում է կրթության հիմքերի որոնման, կիթության միջոցով մարդու ինքնաստեղծման ու ինքնակատարելագործման խնդիրը : Վաղուց արդեն գիտակցված իրողություն է, որ ժողովրդավարական հաստատությունների կառուցվածքն ու օրենքները կարող

են լինել շատ լավը, սակայն, եթե մարդիկ չունեն կամ չեն ստեղծում «ժողովրդավարական սովորույթներ», ժողովրդավարությունը կմնա լոկ որպես գաղափար: Այդ առումով շատ մեծ է պատմության դասավանդման նշանակությունը, քանի որ այստեղ է, որ սովորողը պետք է իր մեջ ձևավորի արժեքների, մոտեցումների, հմտությունների ու գիտելիքների այն համակարգը, որն իրականություն կդարձնի ժողովրդավարությունը:

2. Պատմությունը որպես հոգևոր մշակույթի կարևորագույն տարր օժտված է անձի համակողմանի ձևավորման, նրա մտավոր, ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների զարգացման ահռելի ներուժով: Եթե այլ առարկաները, իրականացնելով իրենց կոնկրետ խնդիրները, հընթացս նաև նպաստում են անձի ձևավորմանը, ապա պատմության հիմնական գործառույթը անձի ստեղծումը և ինքնաստեղծումն է: Պատմության ուսումնասիրումը սովորողներին կօժտի ինքնուրույնությամբ, որի շնորհիվ ուսուցումը ոչ թե կընկալվի որպես պարտադրանք, այլ՝ որպես յուրաքանչյուր մարդու հնարավորությունները մեծացնող գործոն: Սովորողները կհասկանան ինքնախնամքի գաղափարը և կգիտակցեն իրենց պատասխանատվությունն իրենց իսկ առջև որպես մշակութային ինքնարարումի ձգտող էակներ : Պատմության դասավանդման արդյունքներից մեկը կլինի այն , որ անձնային հարթության մեջ մարդիկ կդադարեն թաքնվել հասարակության կամ որևէ խմբի հետևում և կհասկանան իրենց անհատականության զարգացման գործում իրենց իսկ անփոխարինելի դերը :

3. Պատմությունն ամբողջովին և մանավանդ մարդու իրավունքների , քաղաքացիական կրթության , իրավագիտության բաղադրիչների միջոցով կնպաստի ժողովրդավարության հաստատման քաղաքացու ձևավորմանը , ժողովրդավարության հիմնարար արժեքների յուրացմանն ու , այդ ամենի արդյունքում , քաղաքացիական հասարակության ձևավորմանը : Քաղաքացիական կրթության կարևորագույն բաղադրիչ են գենդերային գիտելիքները , որոնք կնպաստեն կյանքի բոլոր բնագավառներում տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը խոչընդոտող կարծրատիպերի հաղթահարմանը ,

հասարակության մեջ և տաղամարդկանց և կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության դրական ընկալմանը :

4. Պատմության ամբողջ ուսուցումն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է , քանի որ նրա գործնական հետևանքները անչափ կարևոր են նոր հասարակական հարաբերության ձևավորման համար : Գործնական առումով շատ կարևոր է , որ աշակերտները ի վիճակի լինեն նախագծեր իրականացնել , որոնել - գտնել համայնքին հուզող խնդիրները , առաջարկել դրանց լուծման ուղիներ ու հետամուտ լինել այդ ամենին : Գործնականում կարևոր է, որ սովորողների մեջ ձևավորվեն ակտիվ քաղաքացիության դիրքորոշում , իրավունքները պաշտպանելու , ինչպես նաև պատասխանատվություն իրականացնելու կամք ու հմտություն : Հեռանկարում միջնակարգ դպրոցն ավարտող սովորողները պետք է օժտված լինեն իրականությունը ինքնուրույն վերլուծելու , սեփական մոտեցում և գործողություն մշակելու կարողությամբ :

Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով մենք կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր ներքին պատկերացումները: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև առկա աշխարհայացքային տարբերությունները: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է , որպեսզի սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Վերջինս հնարավորություն է տալիս հասարակական երևույթները դիտարկել տարբեր կողմերից, կշռադատել դրանց դրական և բացասական ասպեկտների մասին և կայացնել հիմնավորված որոշումներ: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև լավ հնարավորություն

է ստեղծում դրսևորելու ոչ ստանդարտ մոտեցումներ և դրանով իսկ զարգացնելու սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները:

«Պատմություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս սովորել մարդու մտածողության մասին և ձեռքբերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել կոնկրետ իրավիճակներում:

Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով:

«Պատմություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը <<Պատմություն>> առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է:

9-րդ դասարան – հայոց պատմություն

Թեմա - Հայաստանի անկախության գործընթացը

Նպատակը - Անկախության բարդ ճանապարհը և արժևորումը

Դիդակտիկա - քարտեզ , ամսագրեր , պաստառներ

Տեսասահիկը ներկայացնում է դասը ՝ նկարներով

1990 թ. օգոստոսի 23 - Գերագույն խորհուրդը ընդունեց <<Հռչակագիր Հայաստանի անկախության մասին >> , որի քաղաքական բաժնում նշվում էր , որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի հանրապետություն

1991 թ. սեպտեմբերի 21 - ՀՀ անկախության հռչակագիրը

1991 թ. հոկտեմբերի 16 – 1-ին նախագահական ընտրություն

թեկնածուներ – Պ. Հայրիկյան , Ս. Սարգսյան , Լևոն Տեր-Պետրոսյան

ԽՍՀՄ փլուզումը - նկարներ ՝ Լենին , Ստալին , Գորբաչով

Գորբաչովի ծաղրանկարը ՝ կոտրված մուրճ ու մանգաղ

1991 թ. դեկտեմբերի 8 - Բելովեժսկի համաձայնագիր - Կրավչուկ

Շուշկևիչ

Ելցին

1991 թ. դեկտեմբերի 21 – ԱՊՀ ստեղծում

1995 թ. հուլիսի 5 - Սահմանադրություն , 1-ին հոդված , դրոշ , զինանշան , օրհներգ

1919 թ . - ընդունվում է լեզվի մասին օրենքը , որը հռչակեց հայերենը պետական լեզու

Իշխանության տարանջատում - օրենսդիր

գործադիր

դատական

Սահմանադրության փոփոխությունները – 2005 թ. նոյեմբերին նախագահի լիազորությունները սահմանափակվեցին

Ազգային ժողովը վերածվեց գործադիրի

2015 թ. դեկտեմբերի 6-ին - կիսանախագահական ձևը փոխարինվեց խորհրդարանականով

Վարչապետին տրվեց շատ լիազորություններ

ՀՀ մարզային բաժանումը - 10 մարզ + Երևան

Դատական համակարգ - 1992 թ. ստեղծվեցին 1-ին ատյանի

հունիսի 12 – վերաքքնիչ

վճռաբեկ , ինչպես նաև սահմանադրական , տնտեսական , վարչական դատարաններ

Հայոց բանակի ստեղծումը

1991 թ . դեկտեմբերի 5 – Պաշտպանության նախագահ Վազգեն Սարգսյան , Արկադի Տեր-Թադևոսյան

1992 թ. հուվարի 28 - <<Զինապարտության մասին օրենք>>

1-ին զիվորական երդումը կառավարությունը ընդունեց <<ՀՀ պաշտպանության նախարարության մասին >> պատմական որոշումը:

Իսրայելի վարչապետ Գոլդա Մեյրի խոսքերը ՝ հզոր պետություն ստեղծելու բանաձևը

Բանավեճ - քննարկում

Կպչուն թղթերով ներկայացրին իրենց կարծիքը - համաձայն են ՀՀ-ը լինի անկախ , թե մտնի Ռուսաստանի դաշնության կազմի մեջ

Դասն ամփոփվեց բլից հարցումով ՝ 20 հարց

Պերճ Զեյթունցյանի խոսքերը - Եթե ուզում ես թշնամուդ հաղթել , նրա հարևանությամբ ստեղծիր հզոր պետություն

Հ . Սահյան - <<Գարունդ հայերեն է գալու>>

Վերջնարդյունքը

Սովորողների մեջ ձևավորվեց անկախությունը որպես բացարձակ արժեք: Դարեր շարունակ մեր սերունդները պայքարել են միայն դրա համար: Կարևորվեց պետականության դերը, հայրենասիրության և ազգային արժանապատվության դաստիարակման գործում:

Այս թեմայի ընթացքում արժևորվեց այն միտքը, որ պետք է նվիրումով ծառայել Հայաստանին ու հայ ժողովրդին և ազգային պատմության էջերը լրացնել նոր սխրանքներով ու նվաճումներով:

Եզրակացություն

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասրակական, մանկապատանեկան կառույցներ, և այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռտուստատեսությունը, համացանցը

ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:

Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:

Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

ՈՒսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացած կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխ-կապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի

բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Առաջարկություն-Հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները՝ հանրակրթական դպրոցներում կրթության որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է միասնական ջանքեր պահանջող գործընթաց : Անհրաժեշտ է կիառել տարատեսակ գործիքներ , որպեսզի սովորողների մեջ հետաքրքրություն առաջանա ուսման նկատմամբ և սովորողները արդյունավետ ներգրավվեն ուսումնական գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ
3. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
4. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:
5. Մարդ և հասարակություն , գիտամեթոդական ամսագիր N 5-6 , 2008 թ. էջ 6-11 :
6. Ուսուցիչների ուսումնական նյութերի փաթեթ